ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԿԱՐՄՐԱՔԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

23. դեկտեմբերի 2015 թվական
N 61

գյուղ Կարմրաքար

Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզպետ
Պարոն Ֆ. Ցոլակյանին

Հարգելի պարոն Ցոլակյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Կարմրաքարի համայնքի 2015 թվականի դեկտեմբերի 18 - ի 14-րդ նիստի թիվ 14 -Ն, 15-րդ, 16-րդ,17-րդ, 18-Ն,19-րդ, 20-Ն որոշումները:

Հարգանքով Արթուր Մաթևոսյան

Հ. ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մտից թիվ 11785-15
23.12.2015թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԿԱՐՄՐԱՔԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 14 - Ն

18. դեկտեմբերի 2015 թվական

գյուղ Կարմրաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԿԱՐՄՐԱՔԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 8 - Ի ԹԻՎ 22 - Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ և 11-րդ հոդվածների, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի <<բ>> ենթակետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Կարմրաքարի համայնքի ավագանին

Որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Կարմրաքարի համայնքի վարչական տարածքում 2016 թվականի տեղական տուքերի և վճարների դրույքաչափերը սահմանել համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Կարմրաքարի համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 8 - ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Կարմրաքարի համայնքի վարչական տարածքում 2015 թվականի տեղական տուքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու և համայնքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 9 -ի թիվ 14-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին >> թիվ 22 - Ն որոշումը :
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունվարի 1-ից:

Ավագանու անդամներ՝

կողմ - 4 դեմ - 0 ձեռնպահ -0

Հերմինե Հակոբյան
Մանվել Մաթևոսյան
Սուսաննա Ավետիսյան
Սուրեն Սարգսյան

Կարմրաքարի համայնքի ղեկավար՝ Արթուր Մաթևոսյան

18. դեկտեմբերի 2015 թվական
գյուղ Կարմրաքար

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԿԱՐՄԻՐՔԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի ԹԻՎ 14-Ն ՈՐՈՇՄԱՆ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

1) հիմնական օբյեկտների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ չորս հազար հինգ հարյուր դրամ.

2) սույն կետի 1-ին ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ ինը հազար դրամ,

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ տասներկու հազար դրամ,

գ. 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ քսանմեկ հազար դրամ,

դ. 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ.

3) ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ ինը հարյուր դրամ,

բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ ինը հարյուր դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար 1-ին կետով

սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերը:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

մեկ հազար դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ:

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է մեկ հարյուր հիսուն հազար դրամ.

3) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է երեսունհինգ հազար դրամ.

4) համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ երեք հազար դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ մեկ հազար դրամ.

6. Ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար գանձվում է տուրք հետևյալ դրույքաչափերով՝

1) յուրաքանչյուր մեկ ժամվա համար՝ հիսուն դրամ.

2) յուրաքանչյուր մեկ օրվա համար՝ երեք հարյուր դրամ.

3) մեկ շաբաթվա համար՝ երկու հազար դրամ.

4) մեկ ամսվա համար՝ հինգ հազար դրամ.

5) մեկ տարվա համար՝ հիսուն հազար դրամ:

7. Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար՝ հիսուն հազար դրամ:

8. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1) առևտրի օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ.

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ հիսուն հազար դրամ.

3) բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազար դրամ.

4) խաղատների կազմակերպման համար՝ հինգ հարյուր հազար դրամ.

5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ.

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ մեկ հարյուր հազար դրամ:

9. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ մեկ հազար դրամ.

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.

3) այլ արտաքին գովազդի համար՝ մեկ հազար դրամ.

4) դատարկ գովազդային վահանակների համար՝ յոթ հարյուր դրամ:

10. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է մեկ հազար դրամ:

11. Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է

հիսուն հազար դրամ:

12. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է հինգ հազար դրամ:

13.Համայնքի տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայություններ իրականացնելու և (կամ) մատուցելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է հինգ հազար դրամ

14.Համայնքի տարածքում մասնավոր գերեզմանատան շահագործման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար՝՝

1) 3 հեկտարից մինչև 5 հեկտար մակերես ունեցող գերեզմանատների համար - երկու միլիոն հինգհարյուր հազար դրամ.

2) 5 հեկտարից մինչև 7 հեկտար մակերես ունեցող գերեզմանատների համար –հինգ միլիոն դրամ

3) 7 հեկտարից մինչև 10 հեկտար մակերես ունեցող գերեզմանատների համար – յոթը միլիոն դրամ

4) 10 հեկտարից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար տասը միլիոն դրամ:

ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

1. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտական ակտի ձևակերպման համար, ինչպես նաև շահագործման թույլտվություն տրամադրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ երեք հազար դրամ

2. Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ երկու հազար դրամ

3. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել՝ երկու հազար դրամ

4. Աղբահանության վճարը սահմանվում է՝

1) կենցաղային աղբի համար՝ ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող եւ (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ ամսական քառասուն դրամ.

2) ոչ կենցաղային եւ խոշոր եզրաչափի աղբի համար՝ ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ հինգ հարյուր դրամ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Սիրթոն Մաթևոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԿԱՐՄՐԱՔԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 15

18. դեկտեմբերի 2015 թվական գյուղ Կարմրաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԿԱՐՄՐԱՔԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 8-Ի ԹԻՎ 23 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, 27-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի <<բ>> ենթակետի դրույթներով համայնքի ավագանին

Որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Կարմրաքարի համայնքի ղեկավարի 2016 թվականի պաշտոնային դրույքաչափը սահմանել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ 19.65%-ի չափով՝ 130 000 (մեկ հարյուր երեսուն հազար) դրամ

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Կարմրաքարի համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 8-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Կարմրաքարի համայնքի ղեկավարի 2015 թվականի պաշտոնային դրույքաչափը սահմանելու և համայնքի ավագանու 2014 թվականի հուլիսի 18-ի թիվ 10 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 23 որոշումը:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունվարի 1-ից

Ավագանու անդամներ՝

կողմ - 4 դեմ -0 ձեռնպահ -0

Հ. Հակոբյան
Մ. Մաթևոսյան
Ս. Ավետիսյան
Ս. Սարգսյան

Կարմրաքար համայնքի ղեկավար Ա. Մաթևոսյան

18. դեկտեմբերի 2015 թվական
գյուղ Կարմրաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԿԱՐՄՐԱՔԱՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ N 16

18. դեկտեմբերի 2015 թվական

գյուղ Կարմրաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԿԱՐՄՐԱՔԱՐԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 8 -Ի ԹԻՎ 24 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի, 31-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի, <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետի <<բ>> ենթակետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 55-Ա հրամանը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Կարմրաքարի համայնքի ավագանին

որոշում է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Կարմրաքարի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների քանակը՝ 2 :
2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Կարմրաքարի գյուղապետարանի աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Կարմրաքարի համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 8-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Կարմրաքարի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների 2015 թվականի քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և համայնքի ավագանու 2014 թվականի հուլիսի 18-ի թիվ 11 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 24 որոշումը:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ - 4 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

Ս. Ավետիսյան

Հ. Հակոբյան

Ս. Սարգսյան

Մ. Մաթևոսյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. Մաթևոսյան

18. դեկտեմբերի 2014 թվական
գյուղ Կարմրաքար

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Կարմրաքարի համայնքի ավագանու 2015 թվականի
դեկտեմբերի 18-ի թիվ 16 որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԿԱՐՄՐԱՔԱՐԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

Հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքի քանակը	Պաշտոնային դրույքաչափը (դրամ)	Պաշտոնային դրույքաչափի տոկոսաչափը՝ համայնքի ղեկավարի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ (%)	Սահման-ված դրույքը	Սահմանված դրույքաչափը (դրամ)	Ընդամենը (դրամ)
Համայնքային ծառայության պաշտոններ							
1	Աշխատակազմի քարտուղար	1	84000	64.61	1	84000	-
2	Առաջատար մասնագետ	1	78000	60.0	1	78000	-

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. Մաթևոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԿԱՐՄՐԱՔԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

18. դեկտեմբերի 2015 թվական

գյուղ Կարմրաքար

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԿԱՐՄՐԱՔԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի դրույթով համայնքի ավագանին

Որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Կարմրաքարի համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը համաձայն հավելվածի.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ - 4 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

Ս. Ավետիսյան

Հ. Հակոբյան

Ս. Սարգսյան

Մ. Մաթևոսյան

Կարմրաքար համայնքի ղեկավար Արթուր Մաթևոսյան

18. դեկտեմբերի 2015 թվական
գյուղ Կարմրաքար

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի
մարզի Կարմրաքարի համայնքի ավագանու
2015 թվականի դեկտեմբերի 18-ի
թիվ 17 որոշման

	Անվանում	Տարեթիվ	Քանակը	Գումար	Տեխ. վիճակ
1	Պահարան	2008	1	32000	լավ
2	Սեղան	2008	1	78000	Լավ
3	Սեղան	2008	1	36000	Լավ
4	Աթոռ	2008	7	24000	Լավ
6	Համակարգիչ	2008	1	240000	անսարք
7	Մոնիտոր	2008	1	75000	անսարք
8	Տպիչ	2008	1	35000	անսարք
9	Ավտոմեքենա վազ 3110	1998	1	1800000	բավարար
10	Հանգստյան տուն, թիվ 7,8	1987	1		
11	Գերեզմանոց 1		1		
12	Գերեզմանոց 2		1		

Կարմրաքար համայնքի ղեկավար՝ Արթուր Մաթևոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԿԱՐՄՐԱՔԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 18 –Ն

18. դեկտեմբերի 2015 թվական գյուղ Կարմրաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԿԱՐՄՐԱՔԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով համայնքի ավագանին

որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Կարմրաքարի համայնքի 2016 թվականի բյուջեն համաձայն հավելվածի.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ - 4 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

Ս. Ավետիսյան

Հ. Հակոբյան

Ս. Սարգսյան

Մ. Մաթևոսյան

Կարմրաքար համայնքի ղեկավար՝ Արթուր Մաթևոսյան

18. դեկտեմբերի 2015 թվական
գյուղ Կարմրաքար

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզ Կարմրաքարի համայնքի
ավագանու 2015 թվականի դեկտեմբերի
18-ի թիվ 18 -Ն որոշման

1. Եկամուտների գծով՝ հազար դրամ 4298.7
   Ծախսերի գծով՝ հազար դրամ 4298.7

Եկամուտներիգծով

Եկամուտների տեսակները	2016 թվականի բյուջե
Հողի հարկ	367.5
Դոտացիա	3500.0
Վարձակալության Վճարներ	250.0
Գույքահարկ փոխադրամիջոցներից	181.2
Ընդամենը	4298.7

Ծախսերի գծով՝ ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման

Ծախսերի անվանումը	2016 թվականի բյուջե
Օրենսդիր և գործադիր մարմիններ պետական կառավարում	4105.7
Ջրամատակարարում	13.0
Պահուստային ֆոնդ	180.0
Ընդամենը	4298.7

Ծախսերի գծով՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման

Ծախսերի անվանումը	2016 թվականի բյուջե
Աշխատավարձ	3834.0
Էներգետիկ ծառայություն	40.0
Ապահովագրական ծախսեր	35.0
Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	11.5
Գրասենյակային նյութեր և հագուստ	30.0
Տրանսպորտային նյութեր	155.2
Այլ հարկեր	3.0
Պարտադիր վճարներ	10.0
Պահուստային միջոցներ	180.0
Ընդամենը	4298.7

Կարմրաքար համայնքի ղեկավար՝ Արթուր Մաթևոսյան

18 դեկտեմբերի 2015 թվական
գյուղ Կարմրաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԿԱՐՄՐԱՔԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

18. դեկտեմբերի 2015 թվական գյուղ Կարմրաքար

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 19

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԿԱՐՄՐԱՔԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ՝ 1-ԻՆ ՓՈՂՈՑԻ 1-ԻՆ ՇԵՆՔԻ ԹՎՈՎ 4 ԱՎՏՈՏՆԱԿՆԵՐԸ ԵՎ ԹՎՈՎ 3 ՄԱՌԱՆՆԵՐԸ ՆՇՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հոկտեմբերի 3-ի <<Գույք մասնավորեցնելու մասին>> թիվ 1077-Ա որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Կարմրաքարի համայնքի ավագանին

որոշում է

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Կարմրաքարի համայնքի սեփականությունը համարվող՝ 1-ին փողոց 1 շենքի թվով 4 ավտոտնակները և թվով 3 մառանները նվիրաբերել նշված տարածքները զբաղեցնող քաղաքացիներին

1) թիվ 9 հասցեում գտնվող 17.00 քառակուսի մետր մակերեսով մառանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 21082015-08-0017, տրված՝ «21» օգոստոսի 2015 թվական) սեփականության իրավունքով նվիրել 1988 թվականից նշված մառանը զբաղեցնող՝ Հասմիկ Ալեքսանի Մաթևոսյանին:
ինքը՝ Հասմիկ Ալեքսանի Մաթևոսյանը

2) թիվ 10 հասցեում գտնվող 17.00 քառակուսի մետր մակերեսով մառանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 21082015-08-0017, տրված՝ «21» օգոստոսի 2015 թվական) սեփականության իրավունքով նվիրել 1988 թվականից նշված մառանը զբաղեցնող՝ Իշխան Գագիկի Վահրադյանին:
ինքը՝ Իշխան Գագիկի Վահրադյանը

3) թիվ 11 հասցեում գտնվող 34.00 քառակուսի մետր մակերեսով մառանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 21082015-08-0017, տրված՝ «21» օգոստոսի 2015 թվական) սեփականության իրավունքով նվիրել 1988 թվականից նշված մառանը

զբաղեցնող՝ Երվանդ Մաթևոսի Մաթևոսյանին:
ինքը՝ Երվանդ Մաթևոսի Մաթևոսյանը

4) թիվ 12 հասցեում գտնվող 17.20 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 21082015-08-0017, տրված՝ «21» օգոստոսի 2015 թվական) սեփականության իրավունքով նվիրել 1988 թվականից նշված ավտոտնակը զբաղեցնող՝ Սուսաննա Ցոլակի Գաբրիելյանին:
ինքը՝ Սուսաննա Ցոլակի Գաբրիելյանը

5) թիվ 13 հասցեում գտնվող 17.20 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 21082015-08-0017, տրված՝ «21» օգոստոսի 2015 թվական) սեփականության իրավունքով նվիրել 1988 թվականից նշված ավտոտնակը զբաղեցնող՝ Երվանդ Մաթևոսի Մաթևոսյանին:
ինքը՝ Երվանդ Մաթևոսի Մաթևոսյանը

6) թիվ 14 հասցեում գտնվող 17.20 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 21082015-08-0017, տրված՝ «21» օգոստոսի 2015 թվական) սեփականության իրավունքով նվիրել 1988 թվականից նշված ավտոտնակը զբաղեցնող՝ Հասմիկ Ալեքսանի Մաթևոսյանին:
ինքը՝ Հասմիկ Ալեքսանի Մաթևոսյանը

7) թիվ 15 հասցեում գտնվող 17.20 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 21082015-08-0017, տրված՝ «21» օգոստոսի 2015 թվական) սեփականության իրավունքով նվիրել 1988 թվականից նշված ավտոտնակը զբաղեցնող՝ Արթուր Վարդանի Սարգսյանին:
ինքը՝ Արթուր Վարդանի Սարգսյանը

2. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Կարմրաքարի համայնքի ղեկավարին նվիրառուների հետ կնքել գույքի նվիրատվության պայմանագիր, այն ենթարկել նոտարական վավերացման և ապահովել անշարժ գույքի նկատմամբ քաղաքացիների իրավաունքների պետական գրանցումը՝ վերջիններիս միջոցներով:

Ավագանու անդամներ՝

կողմ - 4 դեմ - 0 ձեռնպահ -0

Հերմինե Հակոբյան
Մանվել Մաթևոսյան
Սուսաննա Ավետիսյան
Սուրեն Սարգսյան

Կարմրաքարի համայնքի ղեկավար՝ Արթուր Մաթևոսյան

18. դեկտեմբերի 2015 թվական
գյուղ Կարմրաքար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԿԱՐՄՐԱՔԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

18. դեկտեբերի 2015 թվական գյուղ Կարմրաքար

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 20-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԿԱՐՄՐԱՔԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի ԹԻՎ 26-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի և 5-րդ մասերի դրույթներով՝

համայնքի ավագանին որոշում է

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Կարմրաքարի համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 10-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Կարմրաքարի համայնքի 2015 թվականի բյուջեի հաստատման մասին>> թիվ 26-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները

1. Վարչական բյուջեի պահուստային ֆոնդի <<63.000>> թիվը փոխարինել <<0.0>> թվով
2. <<Էներգետիկ ծառայություններ>> 4212 հոդվածի <<40.000>> թիվը փոխարինել <<20.300>> թվով
3. <<Ապահովագրական ծախսեր>> 4215 հոդվածի <<35.000>> թիվը փոխարինել <<0.0>> թվով
4. <<Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ>> 4112 հոդվածի <<292.000>> թիվը փոխարինել <<249.600>> թվով:
5. <<Տրանսպորտային նյութեր>> 4264 հոդվածի <<79.100>> թիվը փոխարինել <<200.000>> թվով:
6. <<Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ>> 4111 հոդվածի <<3504.000>> թիվը փոխարինել <<3543.200>> թվով:

Ավագանու անդամներ՝

Կողմ- 4 դեմ- 0 ձեռնպահ - 0

Սուրեն Սարգսյան
Սուսաննա Ավետիսյան
Մանվել Մաթևոսյան
Հերմինե Հակոբյան

Կարմրաքար համայնքի ղեկավար Արթուր Մաթևոսյան

18. դեկտեմբերի 2015 թվական
գյուղ Կարմրաքար